CHINAHAY

ԼՐԱԳԻՐ#4

ԼՐԱԳԻՐ#4

2016 օգոստոս

Չինաստանում հայ հետազոտողների եվ ոսանողների երրորդ առցանց գիտաժողով

ՉինաՀայը կազմակերպեց դրամահավաք՝ նվիրված Արցախին

Մենք հիշում ենք և պահանջում

Չինաստանում տեղի ունեցան Հայոց ցեղասպանության տարելիցի հիշատակմանը նվիրված միջոցառումներ

Չենչեն Վանգը ՉինաՀայ-ՀԱՀ համատեղ հայտարարած կրթաթոշակի մրցույթի հաղթողն է

Հպարտ եմ, որ ՉինաՀայ եմ

ՉինաՀայի անդամները պատմում են Չինաստանում իրենց կյանքի ու պատկերացումների մասին

Ներկայացնելով Հայաստանն արվեստի միջոցով

Ցուցահանդես Պեկինում Սաադա Գրիգորյան և Ալեքսանդր Դերոյան

Դաշնամուրային դասական համերգ Չինաստանում Միքայել Հայրապետյան

www.Chinahay.com
Խմբագիր՝ Անահիտ Պարզյան

Չինաստանի Հայկական համայնք

Ջեք և Ջուլի Մաքսյանի Հոնկոնգի հայկական կենտրոն 11/h, շենք A, Թոնիք Ինդաստրիալ Կենտրոն, 26 Քայ Չուենգ փողոց, Կոուլուն Բեյ, Կոուլուն

ChinaHAY
The Armenian Community of China
亚美尼亚人在华社团

ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ III-ՐԴ ԱՌՑԱՆՑ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Գիտաժողովի նպատակները

Չինական բուհերում վերջին տարիների ընթացքում աճել է հայ գիտական մտքի ներկայությունը:
2014թ.-ին տեղի ունեցավ <<Չինաստանում Հայ հետազոտողների և ուսանողների I-ին գիտաժողովը>>, որի շնորհիվ միավորվեցին Չինաստանի տարբեր քաղաքներում գտնվող հայ ուսանողներն ու հետազոտողները: Գիտաժողովի արդյունքում կապ ստեղծվեց նրանց միջև, կազմավորվեց հայ չինագետների թիմը, որը Չինաստանում և այլ երկրներում մասնակցում է գիտական միջոցառումներին, ներկայացնում է հայկական գիտական միտքը: Գիտաժողովին ներկայացված հետաքրքիր աշխատանքները տպագրվեցին: Գիտաժողովը մեծ հետաքրքրություն առաջացրեց, թե՛ Հայաստանում, թե՛ սփյուռքում, լուսաբանվեց լրատվամիջոցների կողմից:
2015թ. նոյեմբերի 29-ին տեղի ունեցավ <<Չինաստանում Հայ հետազոտողների և ուսանողների II-րդ գիտաժողովը>>, որը յուրահատուկ հարթակ տրամադրեց Չինաստանում գտնվող հայ ուսանողներին ու հետազոտողներին՝ ներկայացնելու իրենց գիտական աշխատանքներն ու մտքերը, կապ հաստատեց նորեկների ու Չինաստանում արդեն երկար տարիներ գիտական աշխատանք կատարողների միջև:
2016թ. նոյեմբերի 27-ին տեղի կունենա արդեն ավանդական դարձած <<Չինաստանում Հայ հետազոտողների և ուսանողների III-րդ գիտաժողովը>>, որը կշարունակի համախմբել Չինաստանում առկա գիտական միտքը, կապ կհաստատի փորձառու հետազոտողների և ուսանողների միջև:

Գիտաժողովի մասնակցության պայմանները

Գիտաժողովին կարող են մասնակցել ներկայումս Չինաստանում գիտական աշխատանք կատարող, սովորող հայ ուսանողներն ու հետազոտողները: Գիտաժողովը կանցկացվի օնլայն տարբերակով, որպեսզի միավորի Չինաստանի տարբեր քաղաքներում գտնվող հայերին:

Գիտաժողովին մասնակցելու համար կարելի է ներկայացնել գիտական հոդվածներ, մագիստրոսական, թեկնածուական թեզերի շուրջ աշխատանքներ, վերլուծական աշխատանքներ: Աշխատանքային լեզուն՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն, չինարեն: Աշխատանքների աբստրակտները պետք է լինեն 300-ից 1000 բառ: Յուրաքանչյուր մասնակից հետազոտությունը ներկայացնելու, հարց ու պատասխանի համար կունենա 10 րոպե: Հոդվածը ներկայացվում է A4 ձևաչափի թղթի վրա՝ էլեկտրոնային տարբերակով, տառատեսակը՝ հայերենի անգլերենի և ռուսերենի համար՝ “Sylfaen”, տողերի միջև հեռավորությունը՝ 1,5, տառաչափը՝ 12, միայն վերնագիրը՝ 14 տառաչափով: Նշել հեղինակի անունը, ազգանունը, բուհը: Աշխատանքներն ուղարկել, ինչպես նաև հարցերի դեպքում գրել sahakyanmher@outlook.com էլ. հասցեին: Աշխատանքների աբստրակտների ներկայացման վերջնաժամկետն է նոյեմբերի 20-ը: Գիտաժողովը տեղի կունենա նոյեմբերի 27-ին Պեկինի ժամանակով՝ 21:00: Հաստատված մասնակիցները կտեղեկացվեն գիտաժողովի օնլայն ձևաչափի մանրամասներին: Գիտաժողովին որպես դիտորդ մասնակցելու մանրամասներին կարելի է ծանոթանալ՝ գրելով contact@chinahay.com էլ. հասցեին:

ՄԵՆՔ ՀԻՇՈՒՄ ԵՆՔ ԵՎ ՊԱՀԱՆՋՈՒՄ

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԱՆ 101-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՐԵՑ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

Չինաստանի Հայկական համայնքը Շանհայում

Չինաստանի Հայկական համայնքը Հոնկոնգում

Չինաստանի Հայկական համայնքը Գուանգջոում

Չինաստանում ՀՀ դեսպանատուն

Չինաստանի Հայկական համայնքը Հայոց ցեղասպանության հիշատակմանը նվիրված ամենամյա միջոցառում է անցկացնում: Ամեն տարի, ապրիլի 24-ին Չինաստանի տարբեր նահանգներում հայերը հավաքվում են հարգելու անմեղ զոհերի հիշատակը եւ փաստելու, որ հայն իր հարուստ մշակութային ժառանգությամբ շարունակելու է ապրել եւ երբեք չի մոռանալու այն, ինչ պատահեց:
Այս տարի հավաքներ տեղի ունեցան Շանհայում, Պեկինում, Հոնկոնգում եւ Գուանգջոում:
Հայ ուսանողուհի, ՉինաՀայի անդամ Անի Գրիգորյանն իր՝ «Ես 1.5 միլիոնն եմ» ֆոտոշարքում ներկայացնում է իր նախնիների պատմությունը: Սրանով նա ուզում է ներկայացնել եւ տարածել ճշմարտությունը՝ հետագայում ցեղասպանությունները համայն աշխարհում կանխարգելելու նպատակով:

ՉԻՆԱՀԱՅԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽԻՆ

Չինաստանի Հայկական համայնքն Արցախին օժանդակելու համար դրամահավաք կազմակերպեց, որի արդյունքում հավաքված գումարը փոխանցվեց Արցախի կառավարության կողմից հաստատված հաշվեհամարին: Դրամահավաքն անցկացվեց առցանց եղանակով, որին ակտիվորեն մասնակցեցին Չինաստանում սովորող հայ ուսանողներն ու համայնքի անդամները: Չինաստանում Հայկական համայնքի նախագահ Միեր Սահակյանը կոչով դիմեց համայնքին. <<Հարգելի՛ Չինաստանի Հայկական համայնք, երեք տարի է, ինչ ակտիվ գործում է մեր երիտասարդ ու եռանդուն կազմակերպությունը: Այս ընթացքում մենք բոլորս միասին փորձել ենք մեր ներդրումը բերել Հայապահպանության գործում, ապրել ենք Հայրենիքով ու Հայությանը հուզող հարցերով: 2015թ. ապրիլին մեր ձայնը բարձրացրեցինք հանուն Հայոց ցեղասպանության ճանաչմանը: Հիմա Հայրենիքը նորից մեր օգնության կարիքն ունի: Կոչ եմ անում ակտիվորեն մասնակցել Արցախի համար կազմակերպված այս դրամահավաքին: Այն նպատակ ունի հումանիտար օգնություն ցուցաբերել պատերազմական գործողությունների պատճառով ծանր կացության մեջ հայտնված մեր քաջ եղբայրներին ու քույրերին: Օգնելով Արցախին՝ մեր ներդրումը կկատարենք Հայրենիքի պաշտպանության գործում: Սա հստակ ազդանշան կլինի, որ նրանք մենակ չեն և մենք պատրաստ ենք օգնել հնարավոր միջոցներով: Դրամահավաքի արդյունքում առաջացած գումարը Չինաստանի Հայկական համայնքի անունից կփոխանցվի Արցախի կառավարությանը, քանի որ նրանք են գտնվում մարտական գործողությունների կիզակետում և հստակ գիտեն, թե ինչ է անհրաժեշտ Արցախի հայությանը:>>

Դրամահավաքի ակտիվ մասնակիցներից Նարինե Սարգսյանը նշեց. <<Գտնվելով Հայրենիքից հեռու՝ մենք կիսում ենք Արցախում գտնվող հայրենակիցների ցավը: Այս դրամահավաքը մեր միասնականության խորհրդանիշն է >>:

ՉԻՆԱՀԱՅԸ՝ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԵՐԵԿՈ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

2016 թ. մայիսի 13-ին Չինաստանի Թիանջին քաղաքում տեղի ունեցավ հայկական դասական երաժշտության համերգ: Հանդիսատեսին ներկայացվեցին Կոմիտասի, Սպենդիարյանի, Խաչատրյանի, Բաղդասարյանի, Բաբաջանյանի և Ստեփանյանի ստեղծագործությունները:
Համերգի ընթացքում «Հայաստանի գաղտնիքներ» նախագծի ղեկավար եւ Չինաստանի Հայկական համայնքի գործադիր մարմնի ներկայացուցիչ Միքայել Հայրապետյանը առաջին անգամ ներկայացրեց 20-րդ դարի նշանավոր երգահան Արո Ստեփանյանի ստեղծագործությունները: Համերգի կազմակերպիչներն էին Միքայել Հայրապետյանի «Հայաստանի գաղտնիքներ» նախագիծն ու Չինաստանի Հայկական համայնքը:

ՉԻՆԱՀԱՅԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 25-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ

Հայաստանի Հանրապետության անկախության 25-րդ տարեդարձին նվիրված միջոցառումների շրջանակներում, Չինաստանում ՀՀ դեսպանատան նախաձեռնությամբ Պեկինի Ջինթայի արվեստի թանգարանում տեղի ունեցավ տաղանդավոր նկարիչներ Սեւադա Գրիգորյանի եւ Ալեքսանդր Դերոյանի աշխատանքների ցուցահանդեսը:

Սևադա Գրիգորյանը հայ նկարիչ է, որը 2014թ.-ից ապրում և ստեղծագործում է Չինաստանում՝ «ԴոնգԴոնգ և ԼուԼու» ստեղծագործական տան արվեստագետների ծրագրի շրջանակներում: Այս ժամանակահատվածում Գրիգորյանը ստեղծել է տասնյակ գործեր, որոնք ներկայացվել են Չինաստանի տարբեր քաղաքներում: Նրա ստեղծագործությունները ներկայացվել են Նինգբոյում, Չանքշայում, Ծյաշայում, Շանհայում և այլուր: Առանձնահատուկ էր Ջոնշանի երկրորդ ամենամյա միջազգային ցուցահանդեսը, որտեղ Սևադա Գրիգորյանը ներկայացրեց Հայաստանն իր տասը ստեղծագործություններով: 2016թ. մայիսի 28-ին Նանջինգում տեղի ունեցավ նկարչի անհատական ցուցահանդեսը՝ «Դեպի լույս» խորագրով: Սևադա Գրիգորյանի նկարներն առանձնանում են յուրահատուկ գունեղ մանրանկարչությամբ, նրանց հիմքում այնպիսի հզոր գաղափարներ են, ինչպիսիք են՝ ընտանիքը, սերն ու խաղաղությունը:

Հայ պրոֆեսիոնալ նկարիչ-դիզայներ Ալեքսանդր Դերոյանը այժմ աշխատում է Չինաստանում: Նա ավարտել է Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիան՝ նկարիչ-դիզայներ մասնագիտությամբ: Ալեքսանդր Դերոյանը ՀՀ նկարիչների, ինչպես նաև՝ դիզայներների միությունների անդամ է: Փորձառու նկարիչը ստեղծում է յուրահատուկ արվեստի գործեր՝ համակցելով գույները, երանգները և սիմվոլիկան: Նրա բնանկարները, դիմանկարները և աբստրակտ արվեստի գործերը դիտողին հնարավորություն են ընձեռում նորովի ընկալել մեզ շրջապատող առարկաները:
Ալեքսանդր Դերոյանի ստեղծագործությունները ցուցադրվել են Հայաստանի, Ռուսաստանի, Սիրիայի, Կիպրոսի տարբեր պատկերասրահներում, ինչպես նաև ակադեմիաներում:

ՉԻՆԱՀԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Չինաստանը յուրահատուկ երկիր է իր հինավուրց պատմությամբ և հարուստ մշակույթով: Հայերին Չինաստան են բերել տարբեր հետաքրքրություններն ու պատմությունները, սակայն նրանց միավորում է Հայկական համայնքն ու սերը դեպի հայրենիքը: ՉինաՀայի բոլոր անդամները միասին աշխատում են, որպեսզի պահպանեն հայկական ավանդույթները, լեզուն և ներկայացնեն հայկական մշակույթը: «ՉինաՀայ» լրագիրը զրուցել է ՉինաՀայի անդամների հետ, որոնք ներկայացրել են իրենց պատկերացումները Չինաստանի և ՉինաՀայի մասին:

Ի՞նչ է նշանակում ապրել Չինաստանում: Ինչպիսի՞ դժվարությունների են բախվում հայերն այստեղ ապրելով, և ինչպե՞ս է Չինաստանի հայկական համայնքն օգնում դրանք հաղթահարել: ՉինաՀայերը նաև անդրադարձել են համայնքի կողմից կազմակերպվող դրամահավաքների կարևորությանը:

Մեգի Մելքոնյանը Չինաստանի Հայկական համայնքի գործադիր մարմնի անդամ է: Նա մեծ ավանդ ունի ՉինաՀայի կազմավորման գործում: Նա պարբերաբար մասնակցում է ՉինաՀայի մի շարք միջոցառումների կազմակերպմանը:

Ինչպե՞ս և ե՞րբ եկաք Չինաստան: Ինչպիսի՞ն է Չինաստանը Ձեր ընկալմամբ, ինչպիսի՞ երկիր է այն:

2011թ.-ին ես և ամուսինս՝ Լևոնը, որոշեցինք գործի բերումով Ֆրանսիայից տեղափոխվել Չինաստան: Դա շատ բարդ, բայց միևնույն ժամանակ շատ հետաքրքիր որոշում էր: Դժվար է թողնել հարազատներիդ և այն ապրելակերպը, որին սովորել ես: Իր բարդություններով հանդերձ, այնուամենայնիվ, ոգևորիչ է եւ շատ տարբեր՝ նախկինում ունեցած փորձից: Չինաստանը հարուստ մշակույթ ունի, որի մասին մենք դեռ շատ բան ունենք սովորելու: Հինգ տարի է անցել, և ես երբեք չեմ զղջացել մեր այս որոշման համար:

Ո՞րն է Չինաստանում հայկական համայնքի կարևորությունը:

Դժվար ժամանակներ կային, երբ մենք մայրենի լեզվով խոսելու կարիք էինք զգում, կարիք կար հայրենակիցների հետ շփվելու: Սա հնարավոր դարձավ ՉինաՀայի հիմնադրմամբ: Մենք այլևս մենակ չէինք: Չինաստանի ամբողջ տարածքով մեր հայրենակիցները, որոնք աշխարհի տարբեր երկրներից էին եկել Չինաստան, այլևս միասին էին՝ կապված լինելով միմյանց հետ: Ահռելի աշխատանք է կատարվել յուրաքանչյուրի և ամեն մեկի մասնակցությամբ՝ տարածելու համար հայկական մշակույթը: Մեծ է նաև Չինաստանի հայկական ուսանողական միության ավանդը: Միությունը Չինաստանի տարբեր քաղաքներում պարբերաբար կազմակերպում է միջոցառումներ՝ ներկայացնելով հայ արվեստը, երաժշտությունը և նույնիսկ ավանդական խոհանոցը՝ այդպիսով կամուրջ կառուցելով Չինաստանի ու ՉինաՀայի միջև:

Ինչպե՞ս եք գնահատում ՉինաՀայի դրամահավաքները:

Բազմաթիվ են մեր համայնքի ձեռքբերումները, որոնց բազմիցս անդրադարձել են լրատվամիջոցները, եւ որոնք ներկայացվել են նաեւ մեր համայնքի «ՉինաՀայ» լրագրում: Կցանկանայի առանձնացնել տարբեր իրավիճակներում համայնքի անդամների կողմից դրամական աջակցություն ցուցաբերելու համար կազմակերպված միջոցառումները: Արցախում, ապրիլին վերսկսված պատերազմի օրերին համայնքը շատ մտահոգված էր ողջ աշխարհով սփռված այլ հայերի նման: Ձանքեր չխնայվեցին. Չինաստանի ողջ տարածքով համայնքի յուրաքանչյուր անդամ, յուրաքանչյուր ներկայացուցիչ մասնակցեց դրամահավաքին՝ Արցախին օժանդակություն ցուցաբերելու ցանկությամբ: Ուսանողները, գործարարները և ընտանիքները ձեռք-ձեռքի տված աշխատեցին դրամահավաքը իրականացնելու համար, որպեսզի օգնեն իրենց հայրենակիցներին: Արդյունքն աննախադեպ էր բոլորի համար:

Մենք, բնականաբար, շատ քիչ ենք այստեղ, սակայն նպատակասլաց գործում ենք մեր համայնքը հնարավորինս հզորացնելու համար:

ՉԻՆԱՀԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ



Գոարա Գաբրիելյանը *երգչուհի է Հայաստանից: Նա պարբերաբար Չինաստանում հանդես է գալիս համերգներով՝ ներկայացնելով Հայաստանը: «ՉինաՀայ» լրագրի ընթերցողների հետ Գոարան կկիսվի Չինաստանում ունեցած իր փորձով, ինչպես նաեւ կներկայացնի Չինաստանի Հայկական համայնքն իր ընկալմամբ:*

Երեք տարի առաջ ես Չինաստան եկա «Չինարենի կամուրջ» միջազգային մրցույթի շրջանակներում: Չինաստանն ինձ համար բացահայտվեց որպես հզոր եւ հարուստ մշակույթով երկիր: Երբեմն ես մտածում եմ, որ բավականին դժվար է հասկանալ ու ապրել այս երկրում, որը տարբեր է Հայաստանից՝ իր մշակույթով, կենցաղով, սակայն միևնույն ժամանակ չեմ կարող չնշել, թե որքան բարի ու ընկերական են չինացիները, նույնիսկ ավելի, քան շատ այլ ազգեր:

Ինչ վերաբերում է Չինաստանում Հայկական համայնքին, այն կբնութագրեի որպես մի մեծ ընտանիք: Համայնքը մշտապես կազմակերպում է հավաքներ տոների կամ այլ առիթներով, և մենք՝ բոլորս միշտ շատ ուրախ ենք նորից միմյանց տեսնելու համար, նաև սիրով ողջունելու նորեկներին: Հենց այս հավաքներից մեկի ժամանակ էլ ես հանդիպեցի իմ սիրելիին: Մեր համայնքի առավելություններից եմ համարում այն, որ անդամները ցանկացած հարցով կարող են դիմել համայնքին, և բոլորը մեծ պատրաստակամությամբ աշխատում են օգտակար լինել: Սա իսկապես մի մեծ, ջերմ ու բարի ընտանիք է:

Մենք հաղորդակցության տարբեր հարթակներ ենք օգտագործում: Ինտերնետային «WeChat» խումբը դրանցից մեկն է, որտեղ մեր համայնքի խմբերում կարելի է ստանալ տարբեր հարցերի պատասխաններ ու ամենակարևորը՝ շատ արագ:

Հատուկ ուշադրության են արժանի նաև հայ ուսանողները: Նրանք բավականին կազմակերպված և ուժեղ երիտասարդներ են: Հայրենիքից այդքան հեռու լինելով եւ հանդիպելով բազում խնդիրների՝ մշակութային տարբերություններ, լեզվի, սննդի, մտածելակերպի և այլն, այնուամենայնիվ, նրանք կարողանում են հաղթահարել այդ խոչընդոտները և դեռ ավելին՝ լավագույնս ներկայացնում են Հայաստանը, մեր մշակույթը, սովորույթները և պատմությունը:

Վերջում կցանկանայի նշել, որ Չինաստանը մեծ հնարավորությունների երկիր է: Եթե ունես կամք և ցանկություն, այստեղ ամեն ինչ հնարավոր է: Նորեկներին խորհուրդ կտայի լինել համարձակ ու չվախենալ դժվարություններից: Չինաստանը հետաքրքիր կյանքի փորձ է խոստանում և բացի այդ՝ ՉինաՀայը միշտ այստեղ է ու պատրաստ սատարելու, աջակցելու մեր «ընտանիքի» նոր անդամներին:

ՉԻՆԱՀԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Աննա Հովհաննիսյանը հայ ուսանողուհի է Չինաստանում: Նա ՉինաՀայ համայնքի ակտիվ անդամներից է, բազմիցս մասնակցել է տարատեսակ միջոցառումների և դրամահավաքների կազմակերպ - մանը:

Ե՞րբ և ինչպե՞ս եկար Չինաստան:

Չորս տարի առաջ ես եկա Չինաստան: Այդ ժամանակ արդեն չինարեն էի սովորում Երևանի Կոնֆուցիոսի լեզվի կենտրոնում, և Չինաստան գալն իմ մեծ նպատակն էր: Հետագայում կրթաթոշակ ստացա կրթությունս այստեղ շարունակելու համար: Այն իմ՝ այս երկար ճանապարհորդության սկիզբը դարձավ, որը շարունակվում է ցայսօր:

Ինչպիսի՞ն ես տեսնում Չինաստանը: Քո կարծիքով այն ինչպիսի՞ երկիր է:

Հնարավորությունների և հակասությունների երկիր... Չինաստանն ահռելի շուկա ունի, որը միայն վերջերս է իր դռները բացել արտասահմանցիների համար: Սա մասնագիտական առումով երազանքներն իրական դարձնելու իսկական վայր է: Չնայած կյանքի նորարարական և ժամանակակից մոտեցումներին, այն ավանդական երկիր է՝ հզոր մշակույթով և հինավուրց պատմությամբ: Այս հակասությունները արտացոլվում են մեր ապրելակերպի վրա:

Չինաստանի Հայկական համայնքի դերն ինչու՞մ է:

Միասնականության: Մեզանից շատերն ուսանողներ են՝ հեռու ընտանիքից, և այն հանգամանքը, որ գիտես՝ կա համայնք, որը կարող է միշտ քեզ օգնել և սատար կանգնել՝ թեթևացնելով կյանքիդ հոգսերը, շատ կարևոր է: Այդ ամենը փոխադարձ է. մենք ոչ միայն ստանում ենք, այլև ինքներս նույնպես տալիս ենք, և այդ ամենը միշտ արվում է սիրով: Մեր համայնքն այստեղ մեր ընտանիքն է:

Ինչպե՞ս կբնութագրես ՉինաՀայի՝ պարբերաբար կազմակերպվող դրամահավաքները:

Ես հպարտությամբ կարող եմ ասել, որ ինքս կազմակերպել եմ դրամահավաք և տեսել, թե որքան կազմակերպված ու գթասիրտ են մեր համայնքի անդամները: Կարծում եմ՝ դրամահավաքները կարևոր են, մասնավորապես՝ արտակարգ իրավիճակների պայմաններում, որոնց մենք ականատես եղանք: Կարիքի մեջ գտնվող անդամներին ֆինանսապես օժանդակություն ցուցաբերելը փոքրագույնն է, որ մենք կարող ենք անել:

Չինաստանում հայ ուսանողների միությունը ինչո՞վ է առանձնահատուկ:
Ես համոզված եմ, որ միասնականությունն է, որ մեզ առանձնահատուկ է դարձնում: Մենք միշտ կապի մեջ ենք, մենք օգնում ենք իրար: Միայն մտածեք՝ Չինաստանի որ քաղաքն էլ գնաք, մենք գիտենք տեղի հայերին, միշտ կազմակերպում ենք տեղի հավաքներ: Մի՞թե հիանալի չէ:

Որո՞նք են Չինաստանում սովորելու առավելությունները:

Կարծում եմ՝ չինարենն ամենամեծ առավելությունն է: Այս լեզուն ամենակարևոր լեզուն է դառնում աշխարհում, ու չնայած ամենաբարդն է, այն յուրացնելը հիանալի ապագա է խոստանում: Ես կարծում եմ՝ անվտանգության հարցն էլ է կարևոր. այս երկիրը շատ ապահով է:

Ի՞նչ խորհուրդ կտաս նորեկներին:

Մնացեք ՉինաՀայի հետ: Մի նմանվեք այլ ազգերին և մի հեռացեք ձեր համերկրացիներից: Մենք պետք է միասնական լինենք: Չինաստանը սկզբում այլ մոլորակ է թվում, բայց ժամանակի ընթացքում կընտելանաք և կսիրեք այն: Այնպես որ՝ համբերություն:

ՉԻՆԱՀԱՅ-ՀԱՀ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՉԻՆԱՑԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ. ՀԱՂԹՈՂԸ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ Է

Պեկինի գրաֆիկական հաղորդակցության ինստիտուտի ուսանողուհի Չենչեն Վանգը 2016թ. աշնանը իր ուսումը կշարունակի ՀՀ-ում՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ: Չենչենը ՉինաՀայի և Հայաստանի ամերիկյան համալսարանի կրթաթոշակի հայտարարված մրցույթի հաղթողն է: Անցած տարի Չինաստանի Հայկական համայնքը և Հայաստանի ամերիկյան համալսարանը ստորագրեցին «Համագործակցության հուշագիր», համաձայն որի՝ չինացի ուսանողներին կրթաթոշակ կտրամադրվի Հայաստանի ամերիկյան համալսարանում սովորելու համար:

Սա պատմական քայլ է հայ-չինական հարաբերությունների համար, քանի որ այն չինացի ուսանողներին հնարավորություն կընձեռի ուսանել Հայաստանում, որը նրանց համար միջոց է Հայաստանն ավելի լավ բացահայտելու: «Սա նաև երախտագիտության քայլ է Չինաստանին, որը անցած դարերի ընթացքում առատաձեռնորեն ու մեծահոգաբար է հյուրընկալել հայերին»,- իր խոսքում հավելեց Հենրի Արսլանյանը, որն այս ծրագրի նախաձեռնող է եղել: Բազմաթիվ հայ ուսանողներ միջկառավարական և միջազգային կրթական ծրագրերի շրջանակներում ուսանում են Չինաստանում, այս ծրագիրը նոր համագործակցության քայլ կլինի մեր ժողովուրդների միջև:

Չենչեն Վանգն իր հերթին շատ զգացված է և ուրախ, որ հաղթող է ճանաչվել այս մրցույթում: Նա հուզմունքով սպասում է իր՝ Հայաստան մեկնելուն, որտեղ կբացահայտի մեր ազգի հնագույն մշակույթն ու պատմությունը:

«ՉինաՀայ» լրագրին տված իր հարցազրույցում Չենչենը նշել է. «Ես շատ ուրախ ու շնորհակալ եմ ինձ ընձեռած հնարավորության համար: Շնորհակալությունս եմ հայտնում նաև Չինաստանի Հայկական համայնքին այս հնարավորության համար, ես շատ կաշխատեմ: Այս կրթաթոշակը մեծ աջակցություն է ինձ համար. այն ինձ հնարավորություն կտա կենտրոնանալ միայն կրթության վրա»:

Չենչենը հայերեն սկսել է սովորել Պեկինի օտար լեզուների համալսարանում, որտեղ Մերի Կնյազյանը դասավանդում է հայերեն՝ որպես երրորդ օտար լեզու: Խոսելով հայերենից՝ Չենչենը նշում է. «Հայերենը շատ հետաքրքիր լեզու է: Այն մի քիչ դժվար է, սակայն մեր ուսուցիչը միշտ ոգևորում է մեզ եւ ամեն ինչ անում, որպեսզի մեր դասերն ավելի հետաքրքիր ու ընկալելի լինեն»:

Իր սպասումների մասին խոսելիս Չենչենը նշում է, որ ակնկալում է նոր բացահայտումներ ու հնարավորություններ, հետաքրքիր կրթական միջավայր: Նա որոշել է շարունակել հայերենի դասերը, ինչպես նաև ավելին սովորել հայ ժողովրդի մշակույթի ու ավանդույթների մասին: Նա նաև նշում է. «Հուսով եմ՝ հնարավորություն կունենամ զբաղվել հայկական գորգագործությամբ, ինչպես նաև ուզում եմ տեսնել Արարատ լեռը»:

Չինաստանի Հայկական համայնքը շնորհավորում է Չենչենին այս առիթով եւ մաղթում նրան մեծ ձեռքբերումներ:

ՉԻՆԱՀԱՅ ԼՐԱԳԻՐ #4

Հասանելի է՝
www.chinahay.com

Հասանելի է՝
www.chinahay.com

Հասանելի է՝
www.chinahay.com

www.chinahay.com

Jack and Julie Maxian Hong Kong Armenian Centre
11/F, Block A, Tonic Industrial Centre, 26 Kai Cheung Road, Kowloon Bay, Kowloon

Խմբագիր՝ Անահիտ Պարզյան

ChinaHAY
The Armenian Community of China
亚美尼亚人在华社团